**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 ապրիլի 2020 թվականի   N 243-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄՅԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 3-Ի N241-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և 3-րդ մասով, 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 2-րդ մասով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ ՝**

1. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ղեկավարի 2020 թվականի ապրիլի 3-ի « Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու հերթական նիստ հրավիրելու մասին » N241-Ա որոշման 17-րդ, 18-րդ, 19-րդ և 20-րդ կետերը:

2. Լրացնել նոր բովանդակությամբ հետևյալ 17-րդ կետով՝

«17. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի N98-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** — **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2020թ. ապրիլի 07
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 ապրիլի 2020 թվականի N 244-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՅԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

Սույն թվականի ապրիլի 8-ին գումարել ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու արտահերթ նիստ ՝ հետևյալ օրակարգով՝

1. Հաաստանի Հանրապետության Լոռու մպրզի Տաշիր համայնքի ավագանու 2020 թվականի ապրիլի 8-ի արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:

2. «Տաշիր համայնքի Կ. Դեմիրճյան, Վ. Սարգսյան փողոցների և Լեռնահովիտ բնակավայրի (9-րդ, 6-րդ և 1-ին թաղամաս) ճանապարհների ասֆալտապատում» սուբվենցիոն ծրագիրը հաստատելու մասին:

3. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր քաղաքի փողոցների լուսավորության ցանցի ընդլայնում և նոր էներգաարդյունավետ տեխնոլոգիաների միջոցով արդիականացման» սուբվենցիոն ծրագիրը հաստատելու մասին:

4.«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր քաղաքի բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգման, էներգաարդյունավետության և ջերմաարդյունավետության բարձրացման ծրագիր» սուբվենցիոն ծրագիրը հաստատելու մասին:

5.«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի սեփականություն հանդիսացող շենքերի վերանորոգում» սուբվենցիոն ծրագիրը հաստատելու մասին:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2020թ. ապրիլի 07
ք.Տաշիր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ու Մ**

08 ապրիլի 2020 թվականի N 245-Ա

**ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ, «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածներով և հիմք ընդունելով «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՊՁԲ-20/23» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2020թ. մարտի 20-ի N 2 արձանագրության արդյունքները, հիմք ընդունելով, որ «Արտաշես Մեծ» ՍՊԸ-ը սահմանված ժամկետում ներկայացրել է ստորագրված պայմանագիրը, որակավորման և պայմանագրի ապահովումների՝ տուժանքի մասին համաձայնագրերը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. «Արտաշես Մեծ» ՍՊԸ-ի հետ կնքել ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի կարիքների համար ծառերի ու ծաղիկների մատակարարման «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՊՁԲ-20/23/2» ծածկագրով պետական գնման պայմանագիր:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2020թ. ապրիլի 08
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 ապրիլի 2020 թվականի N 246-Ա

## ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ, «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածներով և հիմք ընդունելով «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՊՁԲ-20/27» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2020թ. մարտի 27-ի N2 արձանագրության արդյունքները, հիմք ընդունելով, որ «ՄԱՔՍ ՕԻԼ» ՍՊԸ-ը սահմանված ժամկետում ներկայացրել է ստորագրված պայմանագիրը, որակավորման և պայմանագրի ապահովումների՝ տուժանքի մասին համաձայնագրերը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. «ՄԱՔՍ ՕԻԼ» ՍՊԸ-ի հետ կնքել ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի կարիքների համար բենզինի մատակարարման «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՊՁԲ-20/27» ծածկագրով պետական գնման պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2020թ. ապրիլի 08
ք.Տաշիր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 ապրիլի 2020 թվականի N 247-Ա

## ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387 -Ն որոշումով հաստատված կարգի 29-րդ կետի դ) ենթակետը, 48-րդ կետը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի վարչական տարածքում գտնվող Սպարտակ Սարգսի Մովսիսյանին սեփականության իրավունքով պատկանող գույքին (հիմք՝ 08.04.2020 կնքված առքուվաճառքի պայմանագիր, նոտարական ակտի կոդ՝ 595-20200408-2-4531953) Լոռու մարզ, Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, Գետափնյա փողոց, թիվ 38ա բնակելի տուն հասցեի փոխարեն տրամադրել ՀՀ Լոռու մարզ Տաշիր համայնք , քաղաք Տաշիր, թաղամաս 4, Գետափնյա փողոց, թիվ 38/1 բնակելի տուն փաստային հասցեն:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2020թ. ապրիլի 09
ք.Տաշիր